Հրավիրվածները հավաքվում էին տղայի տանը, որտեղ նրանց տրվում էր ճաշ[31]։ Եթե եկած հրավիրվածների մեջ կային իրար հետ խռովածներ, նրանց անպատճառ հաշտեցնում էին[32]։ Այդ նույն վայրկյանից փեսացուն արդեն կոչվում էր թաֆվոր. մրկրոնէրն էլ նրա թիկնապահներն էին։

Հրավիրվածների ցրվելուց հետո տղայի տնից ուղարկվում էր աղջկա տունը հարկը՝ այն ամենը, ինչ որ խոստացված էր ճրնհապա կտրելու միջոցին, ապա թաֆվորը ֆավորի և փեսախոր հետ մակառնէրավ շրջապատված՝ զուռնա-ղավալավ գնում էր հարսնացուի տան դուռը եզը[33] մորթելու։ Եզան վիզը զարդարված էր լինում խնձորների շարանով[34]։ Այդ եզ մորթելը հեթանոսական ժամանակվա մատաղ՝ զոհաբերությունն էր, երևի աղջկա տան ոգիներին ուղղած։ Եզան ետևից գնում էր ղասաբը՝ մսագործը։ Զուռնան նվագում էր, ղասաբը վայր էր գլորում եզը, թաֆվորն ու ֆավորն աջ ոտքերը դնում էին եզան վրա. ղասաբը մի քանի կոպեկ նվեր առնելով ֆավորից՝ մորթում էր եզը։ Նախնական զոհաբերության այս մնացորդը պետք է բացատրել աղջկա տան ոգիներին և նրա նախահայրերին բավարարելու ցանկությամբ, իբրև վարձատրություն այն բանի փոխարեն, որ աղջկան տանում էին նրանց խնամքի տակից և այդպիսով զրկում էին նրանց գերդաստանը մեկ անդամից։ Վերջերքս եզը մորթվում էր տղատիրոջ տանը, բայց մորթելուն ներկա պետք է լիներ անպատճառ աղջկա կողմից ուղարկված մեկը[35]։ Եզան կեսը տանում էին տղատիրոջ տունը։ Սրանով ավելի շեշտվում էր տղայի և աղջկա միջև հաստատվող կապը։ Եզան արյան մեջ թաթախած մատով ֆավորը խաչ էր նախշում թաֆվորի ճակատին։ Արյան մեջ թաթախում էին կամ թելը կամ դաշույնի դանակը, կամ կողպեքը։ Թելը հանգուցում էին, դանակը ամուր խցկում էին պատյանը, կողպեքը կողպում էին և դնում թաֆվորի գրպանը։ Այս գործողություններից յուրաքանչյուրն իր նպատակն ուներ՝ հանգուստել, կապել, կողպել ֆաշկէրին[36], որոնք կուզենային վնասել թաֆվորին։ Հավանական է նույն նշանակությունն ուներ այն կարմիր, կանաչ և սպիտակ թելերից ոլորած նարոտի կապելը, որը քահանան կապում էր եկեղեցում պսակադրության ծիսակատարությունների միջոցին թաֆվորի և թաֆուհու ձեռքերին կամ պարանոցին. նույնպես և այն օսկապը[37] ուսկապը— սպիտակ, կարմիր, կանաչ՝ ծիածանի գույների թաշկինակները, որոնք ֆավորկինը կապում էր թաֆվորի կրծքի և ուսերի վրայով խաչաձև և վերջապես այն հարսանեկան կոտին, որը ֆավորն էր կապում հարքնի՝ նորահարսի մեջքին նրա տանը, երբ նա պատ-

---

31 Ննջեցյալների հոգիների թաս՝ բարեմաղթություններով։

32 Բեխ, Վաշագան։ Նույնն էր կրկնվում և ննջեցյալի թաղման ժամանակ։ Դա բխում էր այն նախնական մտածողությունից, թե գյուղը մի արյունակից համայնք է, որի անդամների միջև չի կարող անհամաձայնություն և թշնամանք լինել։ Այդ ազգակցական միասնությունն երևան պիտի գար մանավանդ նոր ամուսնական զույգի համակեցությունը և ներքին համաձայնությունն ամրացնելու նպատակով, և մյուս կողմից հանգուցյալ անդամին հուղարկավորելիս նրա կապը նախնիների հետ վերացնելու համար։

33 Մեղրու բարբառով՝ իզը։

34 Այստեղ կրկին հանդես էր գալիս խնձորը, որը, ինչպես և նուռը, բեղմնավորության նշան էր։

35 Եթե միսը շաղ չէր լինում, այդ ներկայացուցիչը պահանջում էր, որ մի այլ եզ մորթվի։ Նույնպես, եթե հարկը չէր համապատասխանում նախնական պայմանադրությանը, աղջկա տերը պահանջում էր լրացնել, նույնիսկ ետ էր ուղարկում հարկը։

36 Քաջք Մեղրու բարբառով՝ ֆաշկ։

37 Մեղրու բարբառով՝ հուսպէնֆ։